ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

21.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-82/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16, 22.08.2016թ. թիվ 1/73-3/20673-16, 24.08.2016թ. թիվ 1/73-3/20834-16 և 30.08.2016թ. թիվ 1/73-3/21165-16 գրություններով ներկայացված «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-82/16 բողոք), պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16, 22.08.2016թ. թիվ 1/73-3/20673-16, 24.08.2016թ. թիվ 1/73-3/20834-16 և 30.08.2016թ. թիվ 1/73-3/21165-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Կենտրոն), կարծիք ստանալու նպատակով, 06.09.2016թ. թիվ 01/04.1/3338-16, 31.08.2016թ. թիվ 01/04.1/3273-16, 29.08.2016թ. թիվ 01/04.1/3224-16 գրություններով դիմել է «Խաչպար» ՍՊԸ-ին:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

Ի պատասխան Կենտրոնի 06.09.2016թ. թիվ 01/04.1/3338-16 գրության՝ «Խաչպար» ՍՊԸ-ն 13.09.2016թ. գրությամբ հայտնել է, որ մասնակցել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով Ընթացակարգին, որի ընթացքում երկու անգամ ահազանգել է Կենտրոնի թեժ գծին՝ նշելով հրավերի թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի կազմման, այնտեղ նշված կոնկրետ տվյալների ու փաստաթղթերի պահանջների համապատասխան չլինելը ՀՀ օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմինների կողմից հաստատված սահմանումներին, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների վերաբերյալ 4 անգամ բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

«Խաչպար» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությաբ հայտնել է նաև, որ «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.08.2016թ. թիվ 08-260 գրության մեջ չի նշել մի շատ կարևոր և էական հանգամանք՝ այն, որ ԳԲԽ-80/16 որոշումով «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը թիվ 52-րդ չափաբաժնի մասով մերժելու համար հիմք է հանդիսացել ոչ թե մասնագիտական փորձաքննության եզրակացությունը այն մասին, որ Ընկերության կողմից առաջարկված «Դիասոֆտ» Բիո» անվանումով ախտահանիչ միջոցը չի համապատասխանում Պատվիրատուի հրավերում գրված և հաղթող ճանաչված «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով ախտահանիչ միջոցի տեխնիկական բնութագրերին, այլ այն հանգամանքը, որ թիվ 52-րդ չափաբաժնով բացակայել է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, քանի որ ներկայացված չի եղել «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով ախտահանիչ միջոցի կիրառման մեթոդական հրահանգը՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության հրամանով:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի հրավերի թիվ 52-րդ չափաբաժնով գրված և Պատվիրատուի կողմից հաղթող ճանաչված «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով ախտահանիչ միջոցի՝ ՀՀ առողջապահության նախարարության հրամանով հաստատված կիրառման հրահանգը, մասնագիտական փորձաքննության պետք է ներկայացվեր հենց Պատվիրատուի կողմից: Չներկայացնելու պատճառով մասնագիտական փորձաքննությունը չի կարողացել համեմատություններ կատարել և համարժեքության մասին եզրակացություն ներկայացնել Կենտրոնին: «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ բազմիցս դիմել է թե Կենտրոնին, թե գնումների բողոքարկման խորհրդին և թե անմիջապես Պատվիրատուին՝ խնդրելով, որպեսզի Պատվիրատուն ներկայացնի թիվ 52-րդ չափաբաժնով իր իսկ կողմից հաղթող ճանաչված «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով ախտահանիչ միջոցի ՀՀ առողջապահության նախարարության հաստատված կիրառման հրահանգը, որի օրինական պահանջը առկա է հրավերում, սակայն Պատվիրատուն հայտարարել է, որ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» անվանումով ախտահանիչ միջոցը չունի ՀՀ առողջապահության նախարարությանկողմից հաստատված կիրառման հրահանգ, սակայն դա տեղի է ունեցել այն ժամանակ երբ արդեն առկա էր մասնագիտական փորձաքննության եզրակացություն և երբ արդեն ԳԲԽ-80/16 հանձնաժողովը չէր կարող այլ որոշում կայացնել: Այդ որոշման հետևանքով ուժի մեջ մնաց «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 11 նիստի արձանագրության 4-րդ կետի որոշումը, ինչի արդյունքում ոչ ԵՏՄ արտադրության, ՀՀ բուժկանխարգելիչ կազմակերպություններում կիրառվելու համար անհրաժեշտ պայման համարվող՝ ՀՀ ԱՆ հրամանով հաստատված կիրառման մեթոդական հրահանգը չունեցող ախտահանիչ միջոցը հաղթող ճանաչվեց ԵՏՄ արտադրության, ՀՀ ԱՆ հրամանով հաստատված կիրառման մեթոդական հրահանգը ունեցող և համարյա կրկնակի անգամ ավելի էժան գնով ախտահանիչ միջոցի նկատմամբ:

Վերոշարադրվածի արդյունքում, «Խաչպար» ՍՊԸ-ն գտել է, որ իր կողմից թույլ չեն տրվել ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որի արդյունքում Ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

«Խաչպար» ՍՊԸ-ն 25.07.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ս.թ. հուլիսի 22-ին Կենտրոնից ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16 գրությունը՝ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրման վերաբերյալ, հիմնված «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 22.06.2016թ. թիվ 08-198 գրության վրա:

«Խաչպար» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ մասնակցել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպած «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, սակայն ս./թ. մայիսի 26-ից մինչև հունիսի 24-ը ներառյալ, «Խաչպար» ՍՊԸ-ն «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ից ստացել է միայն 2 գրություն՝ 31.05.2016թ. «Պատասխան» անվանումով, որը վերաբերվում է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2016թ. թիվ 2 արձանագրությանը և 17.06.2016թ. «Կարեն» անվանումով գրությունը, որը վերաբերվում է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2016թ. թիվ 5 արձանագրությանը: Այդ 2-րդ գրությունը, Խաչպար ՍՊԸ-ն ստացել է 20.06.2016թ. և հենց այդ նույն օրը, ժամը 15:00-ից հետո «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը ահազանգել է Կենտրոնի թեժ գիծ և հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն չի ստացել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 և 4 արձանագրությունները, որը փաստվում է նաև «Խաչպար» ՍՊԸ-ի «khachpar@rambler.ru» էլեկտրոնային փոստի հասցեից արտատպված՝ մայիսի 26-ից մինչև հունիսի 24-ը ներառյալ ստացված գրությունների ցանկով: Նույն օրը՝ 20.06.2016թ., «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը անձամբ գնացել է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ, հանդիպել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին, որն ի պատասխան տնօրենի խնդրանքի՝ տրամադրել է թիվ 3 և 4 արձանագրությունների պատճենները:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է , որ 22.06.2016թ. «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ 08-198 գրության մեջ Պատվիրատուի կողմից 6-րդ պարբերությունում գրված՝ «....որակավորումը հիմնավորող փաստաթղթերը

ներկայացնելու համար...» արտահայտությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. թիվ 4 արձանագրության 6-րդ կետի 11-րդ ենթակետով «Խաչպար» ՍՊԸ-ին թիվ 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելուց հետո, 8-րդ կետի որոշմամբ չկա որպես 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ, այլ միայն նշված է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի գնային առաջարկները 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով որակել ոչ արժանահավատ և պահանջել գնի պարզաբանում, այսինքն՝ հրավերի նախահաշվարկային գնից ցածր գին առաջարկելու հիմնավորում և պարզաբանում ներկայացնելու պահանջ: Պատվիրատուի 10.06.2016թ. թիվ 4 արձանագրության 8-րդ կետով պահանջվող պարզաբանումը և հրավերի նախահաշվարկային գնից ցածր գին առաջարկելու հիմնավորումը «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չներկայացնելու դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 11-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45 և 46 կետերի պահանջներով, պարտավոր էր «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը այդ չափաբաժիններով գնահատեր անբավարար և մերժեր այն, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ միայն չի կատարել այդ պահանջները, այլև խեղաթյուրելով իրականությունը, 17.06.2016թ. թիվ 5 արձանագրության թիվ 2 կետով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանության շտկման և հրավերի նախահաշվարկային գնից ցածր գին առաջարկելու պարզաբանումն ու հիմնավորումը չներկայացնելը անհիմն կերպով ձևակերպել է, որպես «Խաչպար» ՍՊԸ-ի՝ 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերի չներկայացում: Որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել իր իսկ հրավերի թիվ 8.6 կետի պահանջի խախտում, այսինքն Պատվիրատուն առանց արտահերթ նիստ հրավիրելու 22.06.2016թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խեղաթյուրելով իրականությունը «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանության շտկման և հրավերի նախահաշվարկային գնից ցածր գին առաջարկելու պարզաբանումն ու հիմնավորումը չներկայացնելը անհիմն կերպով

ներկայացրել է որպես Ընկերության կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերի չներկայացնել:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. թիվ 4 արձանագրության 2-րդ էջի բացակայությունը՝ ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանն առդիր 19 թերթերում, պատահականության կամ մոռացության արդյունք չի, դա արված է կանխամտածված, քանի որ դրա առկայությունը կբացահայտեր Պատվիրատուի գրության անհիմն լինելը:

Վերոշարադրվածի արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն Կենտրոնին խնդրել է՝

1. հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի, Կարգի 45 և 46 կետերի պահանջները, «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով գնահատել անբավարար և մերժել այն:

2. Օրենքի 31-րդ հոդվածի, Կարգի 45 և 46 կետերի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8.6 կետի պահանջները խախտելու և ՀՀ ֆինանսների նախարարությանը իրականությանը չհամապատասխանող եզրակացություններ, առաջարկներ ներկայացնելու համար համապատասխան պատասխանատվության ենթարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին:

«Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԻ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

Ի պատասխան Կենտրոնի 31.08.2016թ. թիվ 01/04.1/3273-16 գրության՝ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է «Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԻ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգին, որտեղ թիվ 24 չափաբաժնով ճանաչվել է, որպես առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ 94 500 /իննսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

«Խաչպար» ՍՊԸ-ն ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հրավերի թիվ 3.1 հավելվածում նշված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» պայմանագրի և պատշաճ կատարման մասին տեղեկանքի պատճենները: Պայմանագրի գումարը կազմել

է 12 401 600 /տասներկու միլիոն չորս հարյուր մեկ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, իսկ տեղեկանքում նշվել է համարյա կրկնակի գումարի պայմանագրերի կատարման հավաստում՝ 21 272 000 /քսանմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամի չափով: Պատվիրատուն դա հիմք չի ընդունել և պահանջել է նոր փաստաթղթերի տրամադրում, ինչը որ կատարվել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից՝ ներկայացվել է «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» պայմանագիրը՝ 45 000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով և նրա կատարումը հավաստող տեղեկանքը: Այսինքն՝ 94 500 ՀՀ դրամի գնային առաջարկ ներկայացնելու պարագայում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման երկու պայմանագիր, ընդհանուր գումարը 12 446 600 /տասներկու միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, որից մեկի՝ փոքր գումարով պայմանագրի գումարը կազմում է 45 000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ, ինչը գերազանցում է գնային առաջարկի 20 տոկոսը, որը հավասար է 18 900 /տասնութ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ:

«ՍԳԻ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած երկու պայմանագրերից հաշվի է առել միայն մեկը և 16.08.2016թ. թիվ 24-րդ չափաբաժնով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը՝ հաղթող ճանաչելով «Մագտոնի» ՍՊԸ-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ փաստաթղթեր ներկայացնելու ժամանակահատվածում դիմել էր «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրինությանը, խնդրելով, որպեսզի իրենց կողմից 2015թ. մայիսի 15-ին տրված թիվ 31 տեղեկանքում կատարվի շտկում և կոնկրետ նշվի «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» պայմանագրի գումարի և պատշաճ կատարման մասին, սակայն այդ տեղեկանքը «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է «ՍԳԻ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացնելուց 9 օր հետո՝ 25.08.2016թ., էլեկտրոնային փոստով:

Ամփոփելով վերոշարադրվածը, «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստերը, փաստաթղթերն ու հիմնավորումները հավաստում են, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ՀՀ օրենսդրության պահանջների

խախտումներ, որի արդյունքում ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

Ի պատասխան Կենտրոնի 29.08.2016թ. թիվ 01/04.1/3224-16 գրության՝ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգին՝ թիվ 27-րդ և 33-րդ չափաբաժիններով, որտեղ պահանջվում են ախտահանիչ միջոցներ և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որից հետո սահմանված կարգով ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը, սակայն տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովի կողմից որակվել են, որպես հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող և մերժվել են: «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկել է այդ որոշումները ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում, որի 03.08.2016թ. թիվ 76/16 որոշմամբ մերժվել է «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը, քանի որ մինչ այդ օրը Կենտրոնում դեռ չէր ստացվել ՀՀ առողջապահության նախարարության մասնագիտական փորձաքննության եզրակացությունը՝ Ընթացակարգի հրավերով սահմանված և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ:

2016թ. ապրիլ ամսից սկսած տարբեր Պատվիրատուների կողմից հայտարարված ընթացակարգերի վերաբերյալ՝ ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունների մասին որոշումների բողոքարկումներով «Խաչպար» ՍՊԸ-ն յոթ անգամ բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որոնց ժամանակ կայացել են մոտ երկու տասնյակ նիստեր ու քննարկումներ՝ կապված համարժեք լինելու սահմանումների ու չափորոշիչների հետ:

Վերոգրյալ փաստերն ու փաստարկները Ընկերության կարծիքով բավարար հիմք կհանդիսանան, որպեսզի արձանագրվի, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ՝ դրանից բխող հետևանքներով:

Ի լրումն Կենտրոնին ներկայացված վերոհիշյալ բոլոր բացատրությունների «Խաչպար» ՍՊԸ-ն 08.11.2016թ. գրությամբ ՍՅ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովին հայտնել է հետևյալը.

«Խաչպար» ՍՊԸ-ն Կենտրոնին մանրամասն կերպով բացատրություններ և ապացույցներ է ներկայացրել տարբեր Պատվիրատուների կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած գրություններում «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի բացակայության մասին:

Վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ այդ բոլոր փաստաթղթերը առկա են ներկայացված գործերում, ուստի սույնով ներկայացվում է միայն այն հիմնավորումներն ու փաստաթղթերը, որոնք կամ բաց են թողնվել Ընկերության կողմից ներկայացված բացատրություններում, կամ էլ այդ բացատրություններից հետո են ի հայտ եկել: Այդ հիմնավորումներն են՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.06.2016թ. թիվ 08-198 գրության հիման վրա արված Կենտրոնի 22.07.2016թ. հարցումներին ի պատասխան 25.07.2016թ. ներկայացվել է բացատրական գրություն, որին կից ներկայացվել է «Խաչպար» ՍՊԸ-ի «khachpar@rambler.ru» էլեկտրոնային փոստի հասցեից արտատպված՝ մայիսի 26-ից մինչև հունիսի 24-ը ներառյալ ստացված գրությունների ցանկը, որից հստակ երևվում է, որ Պատվիրատուի էլեկտրոնային փոստից «Խաչպար» ՍՊԸ-ն չի ստացել 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, որով Ընկերությունը 1-ին զբաղեցնող մասնակից է ճանաչվել հրավերի թիվ 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով (որոնք հանդիսանում են բժշկական նշանակության ապրանքներ), ինչի մասին Կենտրոնում առկա է նաև «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից կատարված ահազանգը: Դրանից հետո Կենտրոնի կողմից եղել է պահանջ՝ ներկայացնելու «Խաչպար» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն սպասարկող կազմակերպության կողմից այդ ցանկի հաստատումը: «Խաչպար» ՍՊԸ-ն դիմել է rambler.ru–ն սպասարկող՝ ՌԴ-ում գտնվող, գրասեյակին, սակայն այնտեղից պատասխանել են, որ նման տեղեկատվություն տրամադրում են միայն իրավապահ

մարմիններին, որի պատասխանը ներկայացվել է Կենտրոնին:

Պատվիրատուի 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությունը չեն ստացել մրցույթի այլ մասնակիցներ ևս, որոնցից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի նկատմամբ ևս պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնվել, ստեղծվել է ՍՑ-76/16 հանձնաժողով, որը կայացրել է որոշում: «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է ՍՑ-ԳԲԽ-82/16 հանձնաժողովին, որպեսզի անհայտ պատճառներով Պատվիրատուի 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությունը չստանալու պատճառով Ընկերության կողմից համապատասխան փաստաթղթերը չներկայացնելը համարել թյուրիմացություն, այլ ոչ թե՝ գնումների գործընթացի հաջորդ փուլին մասնակցելուց խուսափում, որը հիմնավորվում է այն փաստի արձանագրումով, որ Ընկերությունը մրցույթներին մասնակցում է հենց այդ՝ որոշակի չափաբաժիններով հաղթելու նպատակով, իսկ թիվ 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով (որոնք հանդիսանում են բժշկական նշանակության ապրանքներ), հաղթելու դեպքում «Խաչպար» ՍՊԸ-ն կունենար շոշափելի արդյունքներ, ուստի անտրամաբանական է հաղթող ճանաչվելուց և սպասվող եկամուտներից ցանկացած մասնակցի կամավոր հրաժարվելը, որի հետևանքով մասնակիցը կարող է հայտնվել «Սև» ցուցակում:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից նաև գրություններ են ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, այս անգամ արդեն «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով Ընթացակարգի հրավերի թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով (որոնք հանդիսանում են ախտահանիչ միջոցներ)՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ՝ հիմնված լինելով «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի տարբեր նիստերում կայացրած որոշումների վրա:

«ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի տարբեր նիստերում կայացրած որոշումների բողոքարկումներով «Խաչպար» ՍՊԸ-ն 5 անգամ, իսկ 1 անգամ էլ «Մագտոնի» ՍՊԸ-ն դիմել են ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին,

կայացվել են ԳԲԽ 72/16, 80/16, 93/16, 96/16, 99/16 և 103/16 որոշումները: 17.08.2016թ. կայացված ԳԲԽ-80/16 որոշումից հետո «Խաչպար» ՍՊԸ-ն կրկին դիմել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, կայացվել են ԳԲԽ-99/16 և ԳԲԽ-103/16 որոշումները: Վերջին 2 որոշումներից հետո թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի տարբեր նիստերում կայացրած բոլոր որոշումները համարվում են առոչինչ: Տեղեկացնում ենք նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ն 14.10.2016թ. դիմել էր ՀՀ առողջապահության նախարարություն՝ խնդրելով իրականացնել այդ նյութերի համարժեքության մասնագիտական կրկնակի փորձաքննություն՝ հաշվի առնելով և համեմատելով առկա բոլոր չափորոշիչները:

07.11.2016թ. ՀՀ ԱՆ պատասխանել է Ընկերության դիմումին, որտեղ մասնագիտական փորձաքննության արդյունքում կատարված համեմատությունները հաստատում են «Խաչպար» ՍՊԸ-ի ճշմարտացի լինելը, ինչպես նաև փաստում են, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի մասնագիտական հանձնաժողովի կողմից 22.09.2016թ. թիվ 08-302 գրությամբ Կենտրոնին ուղարկված և ԳԲԽ-99/16 հանձնաժողովին տրամադրված՝ համարժեքության համեմատական վերլուծությունները չեն համապատասխանում իրականությանը, այսինքն՝ ճիշտ չեն, սխալ են:
Այդ սխալ վերլուծությունները հիմք ընդունելով 22.09.2016թ. ԳԲԽ-99/16 հանձնաժողովը կայացրեց որոշում:

3. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ՖՆ ուղղված 11.08.2016թ. թիվ 88 գրության հիման վրա արված Կենտրոնի 29.08.2016թ. հարցումներին ի պատասխան՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 02.09.2016թ. ներկայացվել է բացատրական գրություն:

Դեռևս «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի բողոքների քննարկումների ժամանակ՝ 04.07.2016թ., «Խաչպար» ՍՊԸ-ն դիմել էր Կենտրոնին, խնդրելով իրականացնել մասնագիտական փորձաքննություն «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով հրավերով պահանջվող և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների (որոնք հանդիսանում են ախտահանիչ միջոցներ) համարժեքության վերաբերյալ: Այդ փորձաքննության արդյունքները ԳԲԽ-76/16 բողոքի քննարկման ժամանակ դեռ հայտնի չէին, ուստի

Ընկերության բողոքը մերժվեց: Այդ փորձաքննության արդյունքները Կենտրոնին տրամադրվել են ՀՀ ԱՆ-ի կողմից 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ տրված եզրակացությունով, որտեղ նշված է, որ դրանք համարժեքներ են, բացառությամբ թիվ 52-րդ չափաբաժնի, որի համար Պատվիրատուն չէր ներկայացրել իր կողմից պահանջված նյութի՝ ՀՀ ԱՆ հրամանով հաստատված կիրառման մեթոդական հրահանգը, որն անհրաժեշտ էր համեմատություններ կատարելու համար, ինչի չներկայացնելը Պատվիրատուն հետագայում բացատրեց նրանով, որ նման փաստաթուղթ տվյալ նյութը չունի: Փորձաքննության թիվ 2 չափաբաժնում առկա նյութերը ամբողջությամբ նույնն են, ինչ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 27-րդ չափաբաժնով պահանջված և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, որպես համարժեք առաջարկված նյութերը, ուստի ելնելով նաև դրանից՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կրկնակի բողոքը քննող ԳԲԽ-86/16 հանձնաժողովը 31.08.2016թ. կայացրած որոշմամբ մասնակի բավարարեց Ընկեևրության բողոքը՝ թիվ 27-րդ չափաբաժնի մասով:

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով մրցույթի հրավերի թիվ 33-րդ չափաբաժնի մասով Ընկերության բողոքը մերժելու համար (ԳԲԽ-86/16 որոշում) էական նշանակություն է ունեցել այդ չափաբաժնով Պատվիրատուի կողմից պահանջված և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, որպես համարժեք առաջարկված նյութի համարժեքության մասին ՀՀ ԱՆ եզրակացության բացակայությունը:

«Խաչպար» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև հետևյալը. «Մասնագիտական փորձաքննություն անցկացնելու խնդրանքով Կենտրոնին դիմելուց հետո մինչև եզրակացության ստանալը տևում է 40 օրից ավելի, իսկ ԳԲԽ որոշում կայացնելու համար սահմանված է 20 օր: Այսինքն՝ եթե անգամ «Խաչպար» ՍՊԸ-ն դիմեր էլ Կենտրոնին թիվ 33 չափաբաժնի մասով մասնագիտական փորձաքննություն իրականացնելու խնդրանքով, ապա միևնույնն է, պատասխանը կստացվեր ավելի ուշ քան թե՝ ԳԲԽ-86/16 հանձնաժողովի որոշման կայացման օրն էր սահմանված:

«Խաչպար» ՍՊԸ-ն ՍՑ-ԳԲԽ-82/16 հանձնաժողովի ուշադրությունն է հրավիրում մի փաստի վրա, որը հասկանալու և գնահատելու համար պետք չէ ոչ նեղ մասնագիտական կրթություն ու փորձառություն, ոչ էլ քիմիական գիտությունների և տերմինոլոգիայի խորը

իմացություն: Ասվածը վերաբերվում է այն ազդող նյութի անվանմանը, որը պահանջվում է ինչպես «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով մրցույթի թիվ 33 չափաբաժնով՝ պոլիհեքսամեթիլեն-գուանիդին հիդրոքլորիդ, այնպես էլ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված՝ պոլիհեքսամեթիլեն-գուանիդին հիդրոքլորիդ, իսկ էթանոլը կամ իզոպրոպանոլը համարվում են, որպես սիներգետիկ միջոցներ: Այսինքն՝ նշված երկու դեպքերում էլ ախտահանիչ միջոցների ազդող նյութերը նույնն են: Արձանագրելով այս փաստի իրողությունը, անդրադառնանք «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ՖՆ ուղղված 11.08.2016թ. թիվ 88 գրությանը, որտեղ նշված է, որ «... և 33-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի տվյալները չեն համապատասխանել հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Համաձայն Կարգի 122 կետի՝ «....պատվիրատուն ....օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի հայտնաբերման....մասին գրավոր ծանուցում է ՀՀ ՖՆ՝ կից ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը...»: Համաձայն Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանումների՝ Պատվիրատուի կողմից ներկայացված՝ հրավերի ապրանքների տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմնավորումը կարող է ենթակա լինել միայն բ. ենթակետի սահմանումին՝ «Գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,....»: Ինչպես կարող է «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկած միջոցի ազդող նյութի գրված քիմիական անունը կեղծ տվյալ համարվել, երբ նա այն միևնույն քիմիական անունն է, ինչ-որ գրված է Պատվիրատուի հրավերի ազդող նյութի անվան տեխնիկական բնութագրում»:

Ելնելով վերոգրյալ հիմնավորումներից՝ «Խաչպար» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ դիմել է ՍՑ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովին, խնդրելով՝ մերժել ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով, նկատի ունենալով, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

«Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.08.2016թ. թիվ 011

գրության հիման վրա արված Կենտրոնի 31.08.2016թ. հարցումներին ի պատասխան՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 13.09.2016թ. ներկայացվել է բացատրական գրություն, որին ի լրումն «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը. «Պատվիրատուի գրությունից տպավորություն է ստեղծվում, թե «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված է եղել համանման միայն 1 պայմանագիր և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստում, այնինչ՝ ներկայացված են եղել 2-ը, որոնց պատճենները առկա են հենց ՀՀ ՖՆ-ին առաքված Պատվիրատուի գրությանը կից փաստաթղթերի ցանկում:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ստանալով 1-ին տեղ զբաղեցնելու մասին Պատվիրատուի 04.08.2016թ. ծանուցումը «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերի Հավելված 3.1-ում նշված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» ինչպես պայմանագրի (12401600 ՀՀ դրամի չափով), այնպես էլ պատշաճ կատարման մասին տեղեկանքի (21272000 ՀՀ դրամի չափով) պատճենները, որոնք որ առկա են հենց Պատվիրատուի կողմից ՀՀ ՖՆ ներկայացված փաստաթղթերում: Սակայն, Պատվիրատուի 15.08.2016թ. թիվ 7 արձանագրությունից տպավորություն է ստեղծվում, թե բացակայում է տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: 15.08.2016թ. ստանալով Պատվիրատուի ծանուցումը «Խաչպար» ՍՊԸ-ն այս անգամ ներկայացրել է նոր՝ «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» պայմանագիր և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը (45000 ՀՀ դրամի չափով), որոնք նույնպես առկա են հենց Պատվիրատուի կողմից ՀՀ ՖՆ ներկայացված փաստաթղթերի ցանկում: 16.08.2016թ. թիվ 8 նիստում Պատվիրատուն որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման ժամանակ հաշվի չի առել «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» ծածկագրով պայմանագիրը, այլ միայն հաշվի է առել «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» ծածկագրով պայմանագիրը և կայացրել է որոշում: «Խաչպար» ՍՊԸ-ն համաձայն չէ այդ որոշման հետ հետևյալ հիմնավորումներով՝

ա) թիվ 24 չափաբաժնով «Խաչպար ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմում է 94500 /իննսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, այն դեպքում երբ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված համանման երկու պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 12446600 /տասներկու միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ,

որից մեկի՝ փոքր գումարով պայմանագրի գումարը կազմում է 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ, ինչը կրկնակիից ավելի գերազանցում է գնային առաջարկի 20 տոկոսին, որը հավասար է 18900 /տասնութ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամի: Այսինքն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած երկու պայմանագրերը համապատասխանում են Կարգի 65-րդ կետի սահմանումներին:

բ) Պատվիրատուն նման որոշում ընդունելով թույլ է տվել նաև Կարգի 69-րդ կետի վերջին պարբերության սահմանման խախտում:

գ) Պատվիրատուն ՀՀ ՖՆ ներկայացված գրության մեջ հղում է արել Կարգի 21-րդ հոդվածի 122 կետին: Համաձայն Կարգի 122 կետի՝ «....պատվիրատուն ....օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի հայտնաբերման....մասին գրավոր ծանուցում է ՀՀ ՖՆ՝ կից ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը...»: Համաձայն Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանումների, Պատվիրատուի կողմից ներկայացված՝ հրավերի ապրանքների տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմնավորումը կարող է ենթակա լինել միայն բ. ենթակետի սահմանումին՝ «Գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,....»: Ինչպես կարող են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը և տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները կեղծ տվյալներ համարվել, երբ որ դրանք բոլորն էլ հաստատված են համապատասխան ընկերությունների կլոր կնիքներով և վավերացված են տնօրենների ստորագրություններով:

Լրացուցիչ տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ՖՆ 02.08.2013թ. թիվ 667-Ա և 20.07.2016թ. թիվ 605-Ա հրամաններով հաստատված են հրավերների 1-ին բաժնի 8-րդ կետի 8.5 և 8.6 ենթակետերը, որոնք նույնությամբ արտատպված են բոլոր 3 Պատվիրատուների բոլոր հրավերներում:

«Խաչպար» ՍՊԸ-ն մանրակրկիտ կերպով ուսումնասիրել է բոլոր 3 Պատվիրատուների կողմից ՀՀ ՖՆ ներկայացրած փաստաթղթերի ցանկերը, սակայն ոչ մեկի մոտ չի հանդիպել Պատվիրատուների մրցույթների գնահատող հանձնաժողովների կողմից հրավերների 1-ին բաժնի 8-րդ կետի 8.6 ենթակետով պահանջված արտահերթ նիստի արձանագրություններին, որտեղ պետք է որոշում կայացվեր ՀՀ ՖՆ դիմելու մասին: Հավանաբար մեր Պատվիրատուները այնքան են աճապարել «Խաչպար» ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հնարավորինս շուտ տեսնելու համար, որ «մոռացել են» այդ «մանրուքը», ինչը իրականում հանդիսանում է ՀՀ ՖՆ հրամաններով հաստատած օրինակելի ձևի և Պատվիրատուների մրցույթների հրավերների 1-ին բաժնի 8-րդ կետի 8.6 ենթակետի սահմանած պահանջի խախտում: «Խաչպար» ՍՊԸ-ի կարծիքով՝ սահմանված պահանջների խախտումներով կազմված գրությունները պետք է մերժվեն, այլ ոչ թե ընթացք ստանան:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 04.11.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է, որ առկա չէ Ընկերությանը Ցուցակում ներառելու որևէ հիմք:

3. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 22.06.2016թ. թիվ 08-198 գրությամբ հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) համապատասխան չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Պատվիրատու 1-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով, ծանուցել է Ընկերությանը սահմանված ժամկետում ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում փաստաթղթերը չեն ներկայացվել, ինչի արդյունքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և Մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն վերոհիշյալ գրությամբ ներկայացրել է էլեկտրոնային փոստից քաղվածք, որը հիմնավորում է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների էլեկտրոնային ծանուցման փաստը, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 04.11.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 22.08.2016թ. թիվ 08-260 գրությամբ հայտնել է, որ ս/թ. մայիսի 25-ին «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն հայտարարել էր բժշկական նշանակության ապրանքների գնման ընթացակարգ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել է նաև «Խաչպար» ՍՊԸ-ն: Ընկերությունը «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ ներկայացրած բողոքի արդյունքում ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժիններով: Այնուհետև՝ 27.07.2016թ. կայացած ընթացակարգի գնահատող հանձանժողովի նիստին, հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագրերը որակել, որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող և մերժել հայտը թիվ 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժիններով՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ: Սակայն, Ընկերությունը 29.07.2016թ. կրկին բողոք է ներկայացրել Կենտրոն՝ ԳԲԽ-80/16 ծածկագրով: Գնումների բողոքարկման խորհրդի 17.08.2016թ. կայացրած որոշմամբ մասնակցի բողոքը բավարարվել է մասնակի, մասնավորապես 52-րդ չափաբաժնի մասով բողոքը մերժվել է: ԳԲԽ-80/16 ծածկագրով բողոքարկման խորհրդի որոշումը գնումների տեղեկագրում հրապարակվել է 19.08.2016թ-ին:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 04.11.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. **<u>«Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) 18.08.2016թ. թիվ 011 գրությամբ հայտնել է, որ «Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման համար կազմակերպված «ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 24-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման (նմանատիպ) պայմանագիրը և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը չի համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

Պատվիրատու 3-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 04.11.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

6. **<u>«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 4) 11.08.2016թ. թիվ 88 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 4-ի կարիքների համար «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի թիվ 27-րդ և 33-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Պատվիրատու 4-ը, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 04.11.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-82/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ,

ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ տվյալ գործով առկա է գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-86/16 որոշումը:

7. <u>ՍՑ-ԳԲԽ-82/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16, 22.08.2016թ. թիվ 1/73-3/20673-16, 24.08.2016թ. թիվ 1/73-3/20834-16 և 30.08.2016թ. թիվ 1/73-3/21165-16 գրություններով ներկայացված «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ (Պատվիրատու 1)՝

○ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 03.06.2016թ. հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

○ Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 1-ի թիվ 9-րդ, 31-րդ, 61-րդ, 63-րդ և 71-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 8-րդ կետով որոշում է կայացվել «Խաչպար» ՍՊԸ-ի գնային առաջարկները թիվ 9-րդ, 31-րդ, 61-րդ և 63-րդ չափաբաժիններով որակել ոչ արժանահավատ և պահանջել գնի պարզաբանում:

○ Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ

նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով՝ առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ին սահմանված ժամկետում ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան չափաբաժիններով գնային առաջարկների պարզաբանումները, ինչի վերաբերյալ առկա է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի gnumner@nmmc.am էլեկտրոնային փոստի հասցեից «Խաչպար» ՍՊԸ-ի khachpar@rambler.ru էլեկտրոնային փոստի հասցեին համապատասխանաբար 13.06.2016թ. և 17.06.2016թ. ուղարկված ծանուցումները:

○ Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 17.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և զրկել Ընկերությանը Ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ սահմանված ժամկետներում որակավորումը հիմնավորող, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի զ) ենթակետով պահանջված փաստաթղթերը չեն ներկայացվել Ընկերության կողմից:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Կենտրոնին հայտնել է, որ 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությունը չեն ստացել մրցույթի այլ մասնակիցներ ևս, որոնցից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի նկատմամբ ևս պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնվել, ստեղծվել է ՍՑ-76/16 հանձնաժողով, որը կայացրել է որոշում: «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է ՍՑ-ԳԲԽ-82/16 հանձնաժողովին, որպեսզի անհայտ պատճառներով Պատվիրատուի 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրությունը չստանալու պատճառով Ընկերության կողմից համապատասխան փաստաթղթերը չներկայացնելը համարել թյուրիմացություն, այլ ոչ թե՝ գնումների գործընթացի հաջորդ փուլին մասնակցելուց խուսափում:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ (Պատվիրատու 2)

○ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Խաչպար» ՍՊԸ-ն 03.06.2016թ. հայտ է ներկայացրել:

○ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով համապատասխանաբար պահանջվել է՝ «Պրեսպտ» կամ համարժեք, «Սայդեքս Օպա» կամ համարժեք, «Անիոզիմ ԴԴ1» կամ համարժեք, «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» կամ համարժեք և «Հեքսանիոս ԳՌ» կամ համարժեք:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Պրեսպտ» - համարժեք՝ «Դիմաքս քլոր», 50-րդ չափաբաժնի համար՝ «Սայդեքս Օպա» - համարժեք՝ «Ստերոքս», 51-րդ չափաբաժնի համար՝ «Անիոզիմ ԴԴ1» - համարժեք՝ «Մեգաբակ», 52-րդ չափաբաժնի համար՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»- համարժեք՝ «Դիասոֆտ բիո», 53-րդ չափաբաժնի համար՝ «Հեքսանիոս ԳՌ»- համարժեք՝ «Մեգաբակ»:

○ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 2-ի թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկը՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ:

○«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.06.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև Խորհուրդ) ներկայացրած բողոքի արդյունքում՝ Խորհրդի 13.07.2016թ. ԳԲԽ-72/16 որոշմամբ, դադարեցվել էր Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով մերժելու մասին որոշումը:

○Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 27.07.2016թ. նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:

○Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. նիստի թիվ 11 արձանագրությամբ կայացրած որոշումը բողոքարկելու նպատակով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն 29.07.2016թ. կրկին բողոք է ներկայացրել Խորհուրդ:

○ Բողոքում նշված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, կից ներկայացնելով՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգները՝ խնդրելով տալ համապատասխան եզրակացություն վերոհիշյալ ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրների՝ մանրէասպան, վիրուսասպան և սնկասպան հատկությունների համարժեքության վերաբերյալ, ինչպես նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ ախտահանման միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը, որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացի ավելի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

○ Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է հետևյալը.

սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի,

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով սահմանված՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները՝ ըստ կիրառման ոլորտների և նպատակների, համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ախտահանիչ միջոցին, ապա ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված մեթոդական հրահանգը չլինելու հետևանքով եզրակացությունը տվյալ ախտահանիչ միջոցի վերաբերյալ բացակայում է:

○ Խորհրդի 17.08.2016թ. ԳԲԽ-80/16 որոշմամբ Ընկերության 29.07.2016թ. բողոքը բավարարվել է մասնակի՝

1. դադարեցվել է գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

2. թիվ 52-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժվել է (քանի որ տվյալ չափաբաժնի մասով բացակայել է ՀՀ ԱՆ համապատասխան եզրակացությունը):

○ Պատվիրատու 2-ը, հիմք ընդունելով Խորհրդի կողմից 17.08.2016թ. կայացված ԳԲԽ-80/16 որոշումը, գնահատող հանձնաժողովի 25.08.2016թ. նիստի թիվ 12 արձանագրության համաձայն չեղյալ է համարել 27.06.2016թ. գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և դրանից բխող հետագա բոլոր որոշումները և Ընկերությանը ճանաչել է հաղթող մասնակից:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն 14.09.2016թ. ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը թիվ 52-րդ չափաբաժնի մասով հայտարարել ապօրինի:

○ Խորհուրդը 03.10.2016թ. ԳԲԽ-99/16 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 14.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է, քանի որ Պատվիրատուի կողմից բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմա-կերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայ- նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 52-րդ չափաբաժնով սահմանվել է «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ապրանքատեսակը, որը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» խմբում (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով), ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Ընթացակարգի 52-րդ

չափաբաժնով սահմանված «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ապրանքատեսակը պետք է ընդգրկված լիներ Ցանկի 1.15-րդ համարով սահմանված «Քիմիական նյութեր» խմբի (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով) «Այլ քիմիական նյութեր» ենթախմբում:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն 23.09.2016թ. ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների և նյութերի» ձեռքբերման նպատակով՝ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարելու մասին 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, և 53–րդ չափաբաժինների մասով:

○ Խորհուրդը 12.10.2016թ. ԳԲԽ-103/16 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 23.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է այն հիմնավորմամբ, որ Պատվիրատուի կողմից բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակները, որոնք հանդիսանում են ախտահանիչ միջոցներ, ներառված չեն ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» խմբում (**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով**), ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակները պետք է ընդգրկված լինեին Ցանկի 1.15-րդ համարով սահմանված «Քիմիական նյութեր» խմբի (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով) «Այլ քիմիական նյութեր» ենթախմբում:

3.«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ (Պատվիրատու 3)

○ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգ 3-ի 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

○ Ընթացակարգ 3-ի հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 27-րդ չափաբաժնով սահմանված է՝ «Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ):

○ Ընթացակարգ 3-ի հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 33-րդ չափաբաժնով սահմանված է՝ «Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ, ձեռքերի հիգիենիկ, վիրաբուժական մշակման և վիրաբուժական դաշտի մշակման համար»:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 27-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ դեղահատեր դյուրալույծ - համամարժեք՝ «Դիմաքս քլոր», տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր և այլն:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 33-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ - համարժեք՝ «Դիասեպտիկ 30», տեխնիկական հատկանիշները՝ պոլիհեքսամեթիլեն – գուանիդինի հիդրոքլորիդ 0,25 %, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հուլիսի 14-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ընկերության կողմից 27-րդ չափաբաժնի համար,

որպես համարժեք ներկայացվել է «Դիմաքս քլոր», տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ), ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ին 27-րդ չափաբաժնի մասով, իսկ 33-րդ չափաբաժնով Ընկերությանը տրվել է 1 աշխատանքային օր որակավորման փաստաթղթերն ամբողջական ներկայացնելու համար:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հուլիսի 18-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն տեխնիկական բնութագիրը 33-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանել հրավերի պահանջներին մասնավորապես՝ Ընկերության կողմից 33-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է «Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ - համարժեք՝ «Դիասեպտիկ 30», տեխնիկական հատկանիշները՝ պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0,25%, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ին 33-րդ չափաբաժնի մասով:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն 12.08.2016թ. ներկայացրած բողոքով Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգ 3-ի հրավերի թիվ 27 և 33 չափաբաժինների տեխնիկական բնութագրերի «Անվանում» և «Բնութագիր» սյունյակներում Պատվիրատուի կողմից նշված են գնման առարկաների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք հանգեցրել են գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը, որի հետևանքով գնման գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ կերպով չի իրականացվել, ինչը հանգեցրել է ոչ համարժեք հատուցմամբ ապրանքների ձեռքբերմանը:

○ 12.08.2016թ. ներկայացրած բողոքով «Խաչպար» ՍՊԸ-ն Խորհրդին խնդրել է դադարեցնել ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 27-ի թիվ 2 որոշմամբ հաստատված հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 27 և 33 չափաբաժինների մասով:

○ Կենտրոնը 15.07.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով հայտնել տեղեկատվություն մի շարք ախտահանիչ միջոցների, այդ թվում նաև՝ **«Պրեսեպտ»** և **«Դիմաքս քլոր»**, ազդող նյութերի, նրանց ֆիզիկո-քիմիական տվյալների, կիառման ոլորտների ու նպատակների, ցուցաբերած ախտահանիչ էֆեկտիվության չափորոշիչների **համարժեքության** վերաբերյալ:

○ ՀՀ առողջապահության նախարարությունը, ի պատասխան Կենտրոնի 15.07.2016թ. գրության, 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրությամբ հայտնել է, որ նշված բոլոր **ախտահանիչ միջոցները համարժեք են:**

○ Խորհուրդը 31.08.2016թ. ԳԲԽ-86/16 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի՝ դադարեցնելով Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին 27.04.2016թ. թիվ 2 որոշմամբ հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 27 չափաբաժնի մասով, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգ 3-ի հրավերի տեխնիկական բնութագրի 27-րդ չափաբաժնով սահմանված են ախտահանող նյութի այնպիսի կոնկրետ տվյալներ, մասնավորապես՝ Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ ***(50%)***, ***5գ*** դեղահատեր, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է ***1.76գ*** ակտիվ քլոր, որոնց տվյալ Ընթացակարգում առաջարկվող ապրանքներից կարող է բավարարել միայն «Պրեսեպտ» ախտահանող նյութը, իսկ վերջինիս համարժեք (ըստ ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրության) այլ ախտահանող նյութերը պարզապես չեն կարող բավարարել Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, իսկ թիվ 33 չափաբաժնի մասով Խորհուրդը «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը մերժել է, քանի որ բողոքաբերի կողմից չի

հիմնավորվել նշված չափաբաժնով գնման առարկայի բնութագիրը Օրենքի պահանջներին ոչ համապատասխան կազմված լինելու փաստը:

4. «Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ (Պատվիրատու 4)

○ «Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Խաչպար» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ որոշում է կայացվել Ընթացակարգի թիվ 24-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.08.2016թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ին Կարգի 51-րդ կետի համաձայն՝ տրվել է 1 աշխատանքային օր՝ որակավորման փաստաթղթերը ամբողջական ներկայացնելու համար, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 3.1-ում նշված նմանատիպ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրության պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը առկա չէր Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2016թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է նմանատիպ պայմանագրի և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստում-տեղեկանքի պատճենները, որի գումարը կազմել է 45 000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության գնային առաջարկի գումարը կազմել է 94 500 ՀՀ դրամ, ուստի գնահատող հանձնաժողովը կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ թիվ 24-րդ չափաբաժնի մասով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Մանգտոնի» ՍՊԸ-ին:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Կենտրոնին հայտնել է, որ փաստաթղթեր ներկայացնելու ժամանակահատվածում դիմել էր «Գորիսի ԲԿ» ՓԲԸ–ի տնօրինությանը, խնդրելով, որպեսզի իրենց կողմից 2015թ. մայիսի 15-ին տրված թիվ 31 տեղեկանքում կատարվի շտկում և կոնկրետ նշվի «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» պայմանագրի գումարի և պատշաճ կատարման մասին, սակայն այդ տեղեկանքը «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է «ՍԳԻ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացնելուց 9 օր հետո՝ 25.08.2016թ., էլեկտրոնային փոստով:

8. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը, գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

○«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 03.06.2016թ. հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

○10.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 1-ի թիվ 9-րդ, 31-րդ, 61-րդ, 63-րդ և 71-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին:

○10.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 8-րդ կետով որոշում է կայացվել «Խաչպար» ՍՊԸ-ի գնային առաջարկները թիվ 9-րդ, 31-րդ, 61-րդ և 63-րդ չափաբաժիններով որակել ոչ արժանահավատ և պահանջել գնի պարզաբանում:

○Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով՝ առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ին սահմանված ժամկետում ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան չափաբաժիններով գնային առաջարկների պարզաբանումները, ինչի վերաբերյալ առկա է «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի gnumner@nmmc.am էլեկտրոնային փոստի հասցեից «Խաչպար» ՍՊԸ-ի

khachpar@rambler.ru էլեկտրոնային փոստի հասցեին համապատասխանաբար 13.06.2016թ. և 17.06.2016թ. ուղարկված ծանուցումները:

○ Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի 17.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և զրկել Ընկերությանը Ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ սահմանված ժամկետներում որակավորումը հիմնավորող, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի զ) ենթակետով պահանջված փաստաթղթերը չեն ներկայացվել Ընկերության կողմից:

○ Ընկերությունը, Կենտրոնի թեժ գծին ահազանգելով, հայտնել է, որ հետևողական լինելով սույն Ընթացակարգին, էլեկտրոնային փոստով որևէ ծանուցում կամ փաստաթուղթ չի ստացել Պատվիրատուի կողմից՝ համապատասխան որակավորման փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ուստի տեղի ունեցած թյուրիմացության պատճառով չի ներկայացրել համապատասխան պահանջվող փաստաթղթերը: Հետևաբար խնդրել է հաշվի առնել նշված հանգամանքները և փաստաթղթեր չներկայացնելը համարել թյուրիմացություն, այլ ոչ թե գնումների գործընթացի հաջորդ փուլին մասնակցելուց խուսափում:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն Ընթացակարգով առկա է ՍՑ-76/16 որոշում՝ որով արձանագրվել է, Պատվիրատուի՝ ***gnumner@nmmc.am,*** էլեկտրոնային հասցեից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի՝ pharmg@netsys.am, էլեկտրոնային հասցեին 2016թ. հունիսի 13-ից 17-ը ընկած ժամանակահատվածում ոչ մի հաղորդագրություն չի ստացվել («Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն նույնպես մասնակցել է սույն Ընթացակարգին):

Կենտրոնը 01.08.2016թ. 01/04.1/2927-16 գրությամբ դիմել է «Նետսիս» ՀՁ ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին՝ pharmg@netsys.am, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստից՝ gnumner@nmmc.am, 13.06.2016թ. և 17.06.2016թ. ծանուցումներ ստացվել են, թե ոչ:

Ի պատասխան Կենտրոնի 01.08.2016թ. թիվ 01/04.1/2927-16 գրության՝ «Նետսիս» ՀՁ ՍՊԸ-ն 09.08.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պատվիրատուի՝ gnumner@nmmc.am, էլեկտրոնային հասցեից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի՝

pharmg@netsys.am, էլեկտրոնային հասցեին 2016թ. հունիսի 13-ից 17-ը ընկած ժամանակահատվածում ոչ մի հաղորդագրություն չի ստացվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել, քանի որ էլեկտրոնային փոստով որևէ ծանուցում կամ փաստաթուղթ չի ստացել Պատվիրատուի կողմից՝ համապատասխան որակավորման փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ուստի չի ներկայացրել համապատասխան պահանջվող փաստաթղթերը:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

○ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Խաչպար» ՍՊԸ-ն 03.06.2016թ. հայտ է ներկայացրել:

○ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով համապատասխանաբար պահանջվել է՝ «Պրեսպտ» կամ համարժեք,

«Սայդեքս Օպա» կամ համարժեք, «Անիոզիմ ԴԴ1» կամ համարժեք, «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» կամ համարժեք և «Հեքսանիոս ԳՌ» կամ համարժեք:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Պրեսպտ» - համարժեք՝ «Դիմաքս քլոր», 50-րդ չափաբաժնի համար՝ «Սայդեքս Օպա» - համարժեք՝ «Ստերոքս», 51-րդ չափաբաժնի համար՝ «Անիոզիմ ԴԴ1» - համարժեք՝ «Մեգաբակ», 52-րդ չափաբաժնի համար՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ»- համարժեք՝ «Դիասոֆտ բիո», 53-րդ չափաբաժնի համար՝ «Հեքսանիոս ԳՌ»-համարժեք՝ «Մեգաբակ»:

○ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 2-ի թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկը՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ:

○«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.06.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև Խորհուրդ) ներկայացրած բողոքի արդյունքում՝ Խորհրդի 13.07.2016թ. ԳԲԽ-72/16 որոշմամբ, դադարեցվել էր Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժիններով մերժելու մասին որոշումը:

○Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 27.07.2016թ. նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններով՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին չհամապատասխանելու և ոչ համարժեք ապրանք առաջարկելու հիմնավորմամբ:

○Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. նիստի թիվ 11 արձանագրությամբ կայացրած որոշումը բողոքարկելու նպատակով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն 29.07.2016թ. կրկին բողոք է ներկայացրել Խորհուրդ:

○ Բողոքում նշված ախտահանիչ միջոցների համարժեքության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով Կենտրոնը 03.08.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, կից ներկայացնելով՝ «Պրեսեպտ», «Սայդեքս

Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցների ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված մեթոդական հրահանգները՝ խնդրելով տալ համապատասխան եզրակացություն վերոհիշյալ ախտահանիչ միջոցների կիրառման ոլորտների ու նպատակների, ախտահանման սպեկտրների՝ մանրէասպան, վիրուսասպան և սնկասպան հատկությունների համարժեքության վերաբերյալ, ինչպես նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ ախտահանման միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը, որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը, ինչը կնպաստի գնումների գործընթացի ավելի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանը:

○ Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.08.2016թ. գրությանն ի պատասխան՝ 15.08.2016թ. ԱԿ 9003-16 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է հետևյալը.

սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այսինքն՝ փոխադարձ փոխարինելի,

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով սահմանված՝ «Պրեսեպտ», «Սայդեքս Օպա», «Անիոզիմ ԴԴ1», «Հեքսանիոս ԳՌ» ախտահանիչ միջոցները՝ ըստ կիրառման ոլորտների և նպատակների, համարժեք են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով ներկայացված «Դիմաքս քլոր», «Ստերոքս», «Մեգաբակ» ախտահանիչ միջոցներին:

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված՝ «Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ախտահանիչ միջոցին, ապա ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված մեթոդական հրահանգը չլինելու հետևանքով եզրակացությունը տվյալ ախտահանիչ միջոցի վերաբերյալ բացակայում է:

○ Խորհրդի 17.08.2016թ. ԳԲԽ-80/16 որոշմամբ Ընկերության 29.07.2016թ. բողոքը բավարարվել է մասնակի՝

1. դադարեցվել է գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

2. թիվ 52-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժվել է (քանի որ տվյալ չափաբաժնի մասով բացակայել է ՀՀ ԱՆ համապատասխան եզրակացությունը):

○ Պատվիրատու 2-ը, հիմք ընդունելով Խորհրդի կողմից 17.08.2016թ. կայացված ԳԲԽ-80/16 որոշումը, գնահատող հանձնաժողովի 25.08.2016թ. նիստի թիվ 12 արձանագրության համաձայն չեղյալ է համարել 27.06.2016թ. գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և դրանից բխող հետագա բոլոր որոշումները և Ընկերությանը ճանաչել է հաղթող մասնակից:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն 14.09.2016թ. ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը թիվ 52-րդ չափաբաժնի մասով հայտարարել ապօրինի:

○ Խորհուրդը 03.10.2016թ. ԳԲԽ-99/16 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 14.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է, քանի որ Պատվիրատուի կողմից բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 52-րդ չափաբաժնով սահմանվել է «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ապրանքատեսակը, որը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» խմբում (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով), ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով սահմանված «Հեղուկ Անիոսեյֆ Սավո-Դու ՀՖ» ապրանքատեսակը պետք է ընդգրկված

լիներ Ցանկի 1.15-րդ համարով սահմանված «Քիմիական նյութեր» խմբի (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով) «Այլ քիմիական նյութեր» ենթախմբում:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն 23.09.2016թ. ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է դադարեցնել «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների և նյութերի» ձեռքբերման նպատակով՝ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարելու մասին 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, և 53–րդ չափաբաժինների մասով:

○ Խորհուրդը 12.10.2016թ. ԳԲԽ-103/16 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 23.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է այն հիմնավորմամբ, որ Պատվիրատուի կողմից բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակները, որոնք հանդիսանում են ախտահանիչ միջոցներ, ներառված չեն ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի գնման առարկայի 1.16-րդ համարով սահմանված «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ» խմբում (**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկագրով**), ինչը կարող է հանգեցնել մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանն ու սահմանափակել մասնակիցների մասնակցության իրավունքը: Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ և 53-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակները պետք է ընդգրկված լինեին Ցանկի 1.15-րդ համարով սահմանված «Քիմիական նյութեր» խմբի (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15 ծածկագրով) «Այլ քիմիական նյութեր» ենթախմբում:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից հրապարակված Ընթացակարգը ի սկզբանե հայտարարվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, ուստի Խորհուրդը գտնում է, որ դրանից բխող բոլոր հետևանքները հիմք չեն կարող հանդիսանալ Ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3.«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ՝

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը***

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում ***հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

○ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգ 3-ի 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

○ Ընթացակարգ 3-ի հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 27-րդ չափաբաժնով սահմանված է՝ «Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ):

○ Ընթացակարգ 3-ի հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 33-րդ չափաբաժնով սահմանված է՝ «Էթանոլ 70%,

պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ, ձեռքերի հիգիենիկ, վիրաբուժական մշակման և վիրաբուժական դաշտի մշակման համար»:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 27-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ դեղահատեր դյուրալույծ - համամարժեք՝ «Դիմաքս քլոր», տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր և այլն:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 33-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ - համարժեք՝ «Դիասեպտիկ 30», տեխնիկական հատկանիշները՝ պոլիհեքսամեթիլեն – գուանիդինի հիդրոքլորիդ 0,25 %, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով:

○ Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 27-րդ և 33-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հուլիսի 14-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ընկերության կողմից 27-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է «Դիմաքս քլոր», տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ), ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է

«Խաչպար» ՍՊԸ-ին 27-րդ չափաբաժնի մասով, իսկ 33-րդ չափաբաժնով Ընկերությանը տրվել է 1 աշխատանքային օր որակավորման փաստաթղթերն ամբողջական ներկայացնելու համար:

○ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հուլիսի 18-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն տեխնիկական բնութագիրը 33-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանել հրավերի պահանջներին մասնավորապես՝ Ընկերության կողմից 33-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է «Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ - համարժեք՝ «Դիասեպտիկ 30», տեխնիկական հատկանիշները՝ պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0,25%, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ին 33-րդ չափաբաժնի մասով:

○ «Խաչպար» ՍՊԸ-ն 12.08.2016թ. ներկայացրած բողոքով Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգ 3-ի հրավերի թիվ 27 և 33 չափաբաժինների տեխնիկական բնութագրերի «Անվանում» և «Բնութագիր» սյունակներում Պատվիրատուի կողմից նշված են գնման առարկաների հատկանիշները բնութագրող այնպիսի կոնկրետ տոկոսներ, կշռաչափեր, ծավալի և ազդող նյութերի այնպիսի թվեր, որոնք հանգեցրել են գնման գործընթացում «Խաչպար» ՍՊԸ-ի համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման գործընթացի խտրական հիմունքներով կազմակերպմանը, որի հետևանքով գնման գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ կերպով չի իրականացվել, ինչը հանգեցրել է ոչ համարժեք հատուցմամբ ապրանքների ձեռքբերմանը:

○ 12.08.2016թ. ներկայացրած բողոքով «Խաչպար» ՍՊԸ-ն Խորհրդին խնդրել է դադարեցնել ««Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 27-ի թիվ 2 որոշմամբ հաստատված հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 27 և 33 չափաբաժինների մասով:

○ Կենտրոնը 15.07.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով հայտնել տեղեկատվություն մի շարք ախտահանիչ միջոցների, այդ թվում նաև՝ **«Պրեսեպտ»** և **«Դիմաքս բլոր»**, ազդող նյութերի, նրանց ֆիզիկո-քիմիական տվյալների, կիրառման ոլորտների ու նպատակների, ցուցաբերած ախտահանիչ էֆեկտիվության չափորոշիչների **համարժեքության** վերաբերյալ:

○ ՀՀ առողջապահության նախարարությունը, ի պատասխան Կենտրոնի 15.07.2016թ. գրության, 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրությամբ հայտնել է, որ նշված բոլոր **ախտահանիչ միջոցները համարժեք են:**

○ Խորհուրդը 31.08.2016թ. ԳԲԽ-86/16 որոշմամբ «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել է մասնակի՝ դադարեցնելով Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին 27.04.2016թ. թիվ 2 որոշմամբ հրավերի տեքստը հաստատելու մասին որոշումը՝ թիվ 27 չափաբաժնի մասով, այն հիմնավորմամբ, որ Ընթացակարգ 3-ի հրավերի տեխնիկական բնութագրի 27-րդ չափաբաժնով սահմանված են ախտահանող նյութի այնպիսի կոնկրետ տվյալներ, մասնավորապես՝ Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ ***(50%)***, ***5գ*** դեղահատեր, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է ***1.76գ*** ակտիվ քլոր, որոնց տվյալ Ընթացակարգում առաջարկվող ապրանքներից կարող է բավարարել միայն «Պրեսեպտ» ախտահանող նյութը, իսկ վերջինիս համարժեք (ըստ ՀՀ առողջապահության նախարարության 15.08.2016թ. ԱԿ/9003-16 գրության) այլ ախտահանող նյութերը պարզապես չեն կարող բավարարել Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, իսկ թիվ 33 չափաբաժնի մասով Խորհուրդը «Խաչպար» ՍՊԸ-ի 12.08.2016թ. ներկայացրած բողոքը մերժել է, քանի որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել նշված չափաբաժնով գնման առարկայի բնութագիրը Օրենքի պահանջներին ոչ համապատասխան կազմված լինելու փաստը:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից հրապարակված Ընթացակարգը թիվ 27-րդ չափաբաժնի մասով ի սկզբանե հայտարարվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, ուստի Խորհուրդը գտնում է, որ դրանից բխող բոլոր հետևանքները հիմք չեն

կարող հանդիսանալ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, իսկ ինչ վերաբերվում է թիվ 33-րդ չափաբաժնին, ապա Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը թիվ 33-րդ չափաբաժնի մասով, գործել է իրավաչափ, քանի որ ***«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի 33-րդ չափաբաժնի համար առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ «Դիասեպտիկ 30», տեխնիկական հատկանիշները՝ պոլիհեքսամեթիլեն – գուանիդինի հիդրոքլորիդ 0,25 %, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով,*** չի համապատասխանում ***Ընթացակարգի հրավերի 33-րդ չափաբաժնով պահանջվող՝ «էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ, ձեռքերի հիգիենիկ, վիրաբուժական մշակման և վիրաբուժական դաշտի մշակման համար»,*** ապրանքի տեխնիկական բնութագրին:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 4.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում:

4. «Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ (Պատվիրատու 4)

Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ի, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2)…….».

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ ***տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը[1].***

4) ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

«Լ. Հովհաննիսյանի անվան «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԻ-16/7-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Խաչպար» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ որոշում է կայացվել Ընթացակարգի թիվ 24-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.08.2016թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ին Կարգի 51-րդ կետի համաձայն՝ տրվել է 1 աշխատանքային օր՝ որակավորման փաստաթղթերը ամբողջական ներկայացնելու համար, մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 3.1-ում նշված նմանատիպ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրության պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը առկա չէր Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2016թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է նմանատիպ պայմանագրի և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստում-տեղեկանքի պատճենները, որի գումարը կազմել է 45 000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության գնային առաջարկի գումարը կազմել է 94 500 ՀՀ դրամ, ուստի գնահատող հանձնաժողովը կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ թիվ 24-րդ չափաբաժնի մասով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Մագտոնի» ՍՊԸ-ին:

Ընկերությունը գրությամբ Խորհրդին տեղեկացրել է, որ ստանալով 1-ին տեղ զբաղեցնելու մասին Պատվիրատուի 04.08.2016թ. ծանուցումը «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերի Հավելված 3.1-ում նշված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» ինչպես պայմանագրի (12401600 ՀՀ դրամի չափով), այնպես էլ պատշաճ կատարման մասին տեղեկանքի (21272000 ՀՀ դրամի չափով) պատճենները, որոնք որ առկա են հենց Պատվիրատուի կողմից ՀՀ ՖՆ ներկայացված փաստաթղթերում: Սակայն, Պատվիրատուի 15.08.2016թ. թիվ 7 արձանագրությունից տպավորություն է ստեղծվում, թե բացակայում է տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: 15.08.2016թ. ստանալով Պատվիրատուի ծանուցումը «Խաչպար» ՍՊԸ-ն այս անգամ ներկայացրել է նոր՝ «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» պայմանագիր և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը 45000 ՀՀ դրամի չափով, որոնք նույնպես առկա են հենց Պատվիրատուի կողմից ՀՀ ՖՆ ներկայացված փաստաթղթերի ցանկում: 16.08.2016թ. թիվ 8 նիստում Պատվիրատուն որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման ժամանակ հաշվի չի առել «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» ծածկագրով պայմանագիրը, այլ միայն հաշվի է առել «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» ծածկագրով պայմանագիրը և կայացրել է որոշում:

Այսպես, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի արժեքը՝ թիվ 24-րդ չափաբաժնի մասով, կազմում է ***94 500 ՀՀ դրամ:***

Ընկերության կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» պայմանագիրը, որի

ընդհանուր արժեքը կազմում է ***12 401 600 ՀՀ դրամ*** և «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմում է ***45 000 ՀՀ դրամ:***

Այսպիսով՝ գումարային արտահայտությամբ, Պայմանագիրը համապատասխանում է Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին: Սակայն, միևնույն ժամանակ Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ***ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար***՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը ***կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:***

Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 15.05.2015թ. տրված թիվ 31 տեղեկանքը, որի համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ն 2013-2014թթ. ընթացքում «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է բժշկական պարագաների մատակարարում՝ ***21 272 000 ՀՀ դրամ ընդհանուր գնով***, այնուհետև Ընկերության կողմից ներկայացվել է «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 09.08.2016թ. տրված թիվ 236 տեղեկանքը, որի համաձայն՝ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ ՓԲԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 12.01.2015թ. կնքված «ԳՆԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-3» պայմանագրի համաձայն Ընկերությունը բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է մատակարարում՝ 45 000 ՀՀ դրամի չափով:

Խաչպար» ՍՊԸ-ն Կենտրոնին հայտնել է, որ փաստաթղթեր ներկայացնելու ժամանակահատվածում դիմել էր «Գորիսի ԲԿ» ՓԲԸ–ի տնօրինությանը, խնդրելով, որպեսզի իրենց կողմից ***2015թ. մայիսի 15-ին տրված թիվ 31 տեղեկանքում կատարվի շտկում և կոնկրետ նշվի «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» պայմանագրի գումարի և պատշաճ կատարման մասին, սակայն այդ տեղեկանքը «Խաչպար» ՍՊԸ-ն ստացել է «ՍԳԻ-ՇՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի***

կողմից «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացնելուց 9 օր հետո՝ 25.08.2016թ., էլեկտրոնային փոստով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ թիվ 24-րդ չափաբաժնի մասով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Մագտոնի» ՍՊԸ-ին:

Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել է Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ:

Ելնելով վերագրյալից, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ է տվել ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետով սահմանված, գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի մասնակցության դադարեցմանը:

Անհրաժեշտ է նշել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում

ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***06.05.2016թ.*** մասնակցելով «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, թիվ 33-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այնուհետև ***19.07.2016թ.*** կրկին հայտ է ներկայացրել «Լ. Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/15-20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ ***որակավորման չափանիշները*** կամ տեխնիկական բնութագրերը ***որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16, 22.08.2016թ. թիվ 1/73-3/20673-16, 24.08.2016թ. թիվ 1/73-3/20834-16 և 30.08.2016թ. թիվ 1/73-3/21165-16 գրություններով ներկայացված «Խաչպար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00071045) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամ՝ **Մարիամ Սարգսյան**